

## ԼԵՎՈՆ ԱՐՈՆՅԱՆ



Լևոն Գրիգորի Արոնյանը ծնվել է 1982 թվականի հոկտեմբերի 6-ին Երևանում:

Հանրահայտ շախմատիստ Լևոն Արոնյանը 1994 թվականին Սեզեդ քաղաքում դարձել է մինչև 12 տարեկանների աշխարհի չեմպիոն, որի համար նրան շնորհվել է ՖԻԴԵ-ի վարպետի կոչում:

1995 թվականին Փարիզում Լ. Արոնյանը հաղթել է մինչև 14 տարեկանների արագ շախմատի աշխարհի առաջնությունում: Այնուհետև, 1996 թվականին հաղթել է Իսպանիայում կայացած մինչև 14 տարեկանների աշխարհի առաջնությունում, նույն թվականին դարձել է միջազգային վարպետ:

1997 թվականին նա նվաճել է Կասպարովի գավաթը:

1999 թվականին Լ. Արոնյանը դարձել է Հայաստանի փոխչեմպիոն և ընդգրկվել է Հայաստանի հավաքականի կազմում, որը Բաթումում դարձել է Եվրոպայի չեմպիոն:

2000 թվականին հանրահայտ շախմատիստ Լևոն Գրիգորի Արոնյանին շնորհվել է գրոսմայստերի կոչում:

2001 թվականին Հայաստանում, այնուհետև՝ 2002 թ.-ին՝ Հնդկաստանում Լ. Արոնյանը նվաճել է մինչև 20 տարեկանների աշխարհի չեմպիոնի կոչումը:

2004 թվականին Իտալիա Կավլիա քաղաքում կայացած համաշխարհային օլիմպիադայում Հայաստանի հավաքականի կազմում նա նվաճել է թիմային բրոնզե մեդալ:

2005 թվականին հայ գրոսմայստեր Լևոն Արոնյանը Խանտի Մանսիյսկում նվաճել է ՖԻԴԵ-ի աշխարհի գավաթը:

2006 թվականին Վլադիմիր Հակոբյանի, Կարեն Ասրյանի, Սմբատ Լպուտյանի, Գաբրիել Սարգսյանի և Արտաշես Մինասյանի հետ Լ. Արոնյանը դարձել է Թուրինի 37-րդ համաշխարհային օլիմպիադայի հաղթող: Գերմանիայի Մայնց քաղաքում Լ. Արոնյանը նվաճել է «Շախմատ-960» -ի /Ֆիշերի շախմատ/ աշխարհի չեմպիոնի կոչումը:

2008 թվականին Վեյկ ան Զեեի ավանդական մրցաշարում Լ. Արոնյանը լրացուցիչ ցուցանիշներով ճանաչվել է հաղթող:

Ֆրանսիայի Նիցցա քաղաքում կայացած «կոյր» և արագ շախմատի ավանդական մրցաշարում ճանաչվել է հաղթող և հռչակվել ամբողջ մրցաշարի բացարձակ հաղթող: Նույն թվականին Հայաստանի հավաքականը Դրեգդենում դարձել է 38-րդ համաշխարհային օլիմպիադայի չեմպիոն:

2010 թվականին Լևոն Արոնյանը Մոսկվայում դարձել է Միխայիլ Տալի հուշամրցաշարի հաղթող, այնուհետև՝ դարձել է կայծակնային շախմատի աշխարհի չեմպիոն:

2011 թվականին Չինաստանի Նինբո քաղաքում Հայաստանի հավաքականի կազմում Լևոն Արոնյանը դարձել է աշխարհի թիմային առաջնության հաղթող:

2012 թվականին Լ. Արոնյանը իր թիմակիցների հետ միասին երրորդ անգամ հաղթել է համաշխարհային օլիմպիադայում:

2013 թվականին Լ. Արոնյանը մասնակցել աշխարհի չեմպիոն Ալեքսանդր Ալյոխինի հուշամրցաշարին և լրացուցիչ ցուցանիշներով ճանաչվել է հաղթող:

2014 թվականին Ցյուրիխում մասնակցել է 23-րդ կարգի գերմրցաշարին, որտեղ նա դասական շախմատում զբաղեցրել է 2-րդ տեղը, արագ շախմատում՝ 3-րդ: Այդ մրցաշարում հայ գրոսմայստեր Լ. Արոնյանը իր անհատական վարկանիշը հասցրել է իր համար ռեկորդային 2830 ցուցանիշի:

Հայ անվանի շախմատիստ, գրոսմայստեր Լևոն Արոնյանը պարգևատրվել է «Մովսես Խորենացի» /2006թ./, «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալներով /2008թ./, «Մուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանով /2012թ./ և «Երևան» զինանշան հուշամեդալով:

2014 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ անհատական վարկանիշով Լևոն Գրիգորի Արոնյանը աշխարհի 2-րդ շախմատիստն է: